


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|-------------------|--------|
| Պաշտարանի համար | 12 ֆր. |
| Սահմանային | 6 " |
| Արտասահմանի համար | 15 " |
| Սահմանային | 8 " |
| Անտիկալի համար | 3 ֆր. |
| Սահմանային | 1.50 " |

Մանուցման տղը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սահմանի կ. երեսին առաջին անգամներու համար 20 0/0 զեղչ կրուցայ:

Վառակայի համար 40 սահմանի



ԼՐԱԳԻՐԱԶԳԱՐԻՆ. ԲԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ

ԿԸՂՐՍՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹՕՐԵՐԸ

ՇՈՐԱԿԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆՈՐԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵ

Նախկին և նորապիստ լիբրարիաներու համար

Редакция на вѣстники "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charoum" (Bu garie) Yarna

Պաշտարանի համար 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար 15 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և սրտիք

ՕՐԷՆՔ ԵՒ ՕՐԻՆԱԶՆՅՈՒԹԻՒՆ

7.

Նախորդ յօդուածով պետական օրէնքների հանդէպ հին պատմական մեծ օրինական Գրաքեան եղբայրների մասին խօսելով, որոնք ժողովրդեան շահերը պաշտպանելու գաղափարով տոգորված ամեն վտանգ յանձն առան ոչնչացնելու անպէտք օրէնքները և նորերը ստեղծելու, մենք խոստացանք յոյնանման օրինակներ և երեսնամեծ մատնանշել և հետագայ պատմութիւնից:

Ո՞վ չը գիտէ թէ Հոմեր քերթապետական շրջանում, նոյն Հոմեր պապերը ինչ անասման իշխանութիւն ունէին ամբողջ քերթապետայ իւրաքանչիւր օրէնքներով, նոյնիսկ Աստուծո թելադրութեամբ, ինչպէս իրենք պապերը, իրենց եպիսկոպոսները և հացկատակ, դիւրաւ կերպով ապրելու ձգտումներ ունեցող հետեւողներն էին բացատրում:

Վայ այն անհատին, որ պապական օրէնքները քննադատում և նրանց դէմ էր գնում. նրա համար պատրաստ էին անաթէմաներ զանազան մակդիրներ, տանջանք, շարժարանք, հալածում, մի խօսքով այն բոլորը ինչի որ ընդունակ է ստոր բռնութիւնը իր անկումը զգացած առաջին վայրկեանին, իր ստեղծած օրէնքը չի յարգող օրինականի դէմ:

Ուժեղ թագաւորներն անգամ խոնարհում էին պապերի առջեւ ու չէին համարձակվում պապի հեղինակութիւնը սրբազործող օրէնքները ոտքի տալ. սրանցից մին իր համարձակ քայլի համար պարտաւորվեց Գաղղիայից գնալ Հոմեր, դուրսը ձմրանը ոտքուպիկ կանգնել, մինչեւ որ պապը կը բարեհաճէր նրան ներում շնորհել. ու այդ ներումը ուժեղ թագաւոր Հենրիկոսը ստացաւ:

պապի սիրուհի բող Մաթիլտայի միջամտութեան շնորհիւ:

Բայց ժամանակները փոխվեցին, ու եկաւ մի պարզ կրօնական 16րդ դարի սկզբում Լուտերը. առանց զօրքի, առանց ֆիզիկական ուժի ուժի, միայն բարոյական սկզբունքների վրա հիմնված, ըմբոստացաւ պապի դէմ, օրէնքները ոտքի տակ տալով, որոնք միայն ժողովուրդներին շահագործելու համար էին ստեղծված, սկսեց պայքարը պապական օրէնքներով սրբազործված իշխանութեան դէմ. Հոմերի եկեղեցին և նրա օրէնքները Լուտերին օրինական հոչակեցին, նրան հալածեցին, գրաւորները այրեցին, որովհետեւ Լուտեր օրինական էր, իր ժամանակի անպէտք ժողովուրդը հարստահարող, հացկատակներ պահող օրէնքների «տառական և ոգու ճշգրտութեան» դէմ էր գնում:

Բայց Լուտերը ինքը, նրան հետեւողները և մարդկութեան հետագայ սերունդները Լուտերին ընդունեցին մարդկային իրական օրինաւոր իրաւունքների պաշտպան ու ոչ օրինական, այլ մարդկութեան իրաւունքները պաշտպանելու համար իրական օրէնքներ ստեղծելու փափագող անձնազոհ:

Ու պապերի և նրանց հացկատակ Լէգէոն կրօնաւորների և այլ հարստահարիչների բոլոր ջանքերը զուր անցան, Լուտերը ջլատեց այն պապերի իշխանութիւնը, որից վախենում էին կայսերները իրենց զօրքերով և զօրավարներով միասին. Պապերը չը կարողացան Լուտերին այրել այնպէս, ինչպէս այրեցին նրա նախորդ Ռահմիրա Սափանաբուլին Իտալիայում, որը իր փշուրք և բարոյապէս ընկած ցեղի մէջ չը կարողացաւ ունենալ Լուտերի թարմ ցեղի պաշտպանութիւնը և հովանաւորութիւնը:

Լուտերի պայքարը կրօնական և խղճի ազատութեան համար էր գլխաւորաբար. բայց այդ ըմբոստութիւնը արձագանք գտաւ:

Գերմանիայի գիւղացիական ըստաւար խաւերում, բոլորովին տարբեր հողի վրա, թէեւ կրկին կրօնական և աշխարհական իշխանութիւնների դէմ, պայքար գիւղացիական ապստամբութիւնը շնորհիւ Թոմաս Միլնցերի, Կարլշտատի, Ֆրանց Չիլիկենի և Ուլրիխ Գուտենի ապստամբի, որոնք մի մի խոշոր օրինականներ հանդիսացան տիրող օրէնքների և իշխանութիւնների դէմ, նոյն իսկ հակառակ Լուտերի. Ամբողջ Ներոպայում յաջողաբար, ժամանակի ընթացքում նոյն օրինականութիւնները տեղի ունեցան, անգլիա 17րդ դարում ունեցաւ իր Կրօնվէյները, Ֆրանսա 18րդ դարի վերջերում իր Մալաները, Գանտոնները, Կամբրիջէմութիւնները Ռօբէսպիէրները, որոնք տողարված իրենց ժողովրդների իրական շահերը պաշտպանելու և թագաւորների ազնուականներին, ու նրանց շրջապատող հացկատակների կամայականութեանց վերջ տալու գաղափարով, հանդիսացան օրինականներ ժամանակի պետական օրէնքների հանդէպ, ըմբոստացրին ժողովրդներին, անցան նրանց գլուխը, և յաջողեցին տապալել դարերով, պապերով կայսրերով սրբազործված օրէնքները և ստեղծեցին այն օրէնքները որոնց շնորհիւ մարդկութիւնը կարողացաւ յառաջադիմութեան ուղին մտնել, ազատութիւն տալ իր մտքի, իր խղճի, իր կեանքի իրական և լայն պահանջների թախչներին:

Եթէ այս մեծ մարդիկը չլինէին, հարազատ ծնունդ իրենց ժամանակի հասունացած պահանջների, միջավայրի և ձգտումների, որոնց իրենց ժամանակակից հացկատակ օրինականները օրինականաց տիրողոսով էին մկրտում և հալածում, այսօր ամբողջ մարդկութիւնը թերեւս ոչխարային մի հոտ լինէր և կայսրները, պապերը, տէրտէրներն ու վարդապետները և ամեն կարգի հացկատակները:

նոյն անբնական չարախախտ շահերով շարունակէին իրենց լիրբ և անասման ու անասնաշահագործումը և ի վնաս ժողովրդների իրենց անպէտք և վնասակար զոյրութիւնը պահպանէին:

ՎԱՐԴՕ

ՀԱՅ ԵՒ ՄԱԿԵՒՈՆԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒԽԱԿԱՆ ՇՈՐԱԿԻՄԱՆԵՐԸ

(Շար. Ասխորոյ քիւնէ և վերջ)

Ռուսիան ձախ ձեռքով հաղիւ տրւածը ալ ձեռքով կատարելապէս կանչէ. «Փաթ բրէսթով» ֆոթ բրէսթով ապաւն կը հետագայէր Նաբոլիոն Գ. Բարին 1866 թուականին կարիպաւտական շարժումին զօրանալուն առթիւ. Ասիկայ կը նշանակէր զուտ լինուցեցէք, ամուր բռնեցէք, սրով հետեւ ապստամբութիւն մը գոր խաղաղացնէր երկար կը սեւէ՝ իր ետեւէն ուրիշ ապստամբութիւն մը կը բերէ: Ապստամբութիւնները պէտք է արագ ճգմել ինչպէս որ ծանր օրերասիտը պէտք է շուտ և գործօրմով ընել. «Բազաղաղացեցէք շուտ» կը պտտար անցաւ տարի Չինովիէֆ Սուլթանին Պոլսու, նոյնը կը կրկնէր նաեւ արտաքին գործոց թիթիսպուրիկեան նախարարութիւնը բոլոր իր խորհրդակցութիւններու մէջ: Բայց տաճիկ գիւնուրները և պայքարողները չեն վարժուած սակաւին շուտ խաղաղացնելու. Անոնք կանգ կառնեն ամէն շէկ գրան առջեւ, ամէն մէկ սնտուկի առջեւ և ամէն մէկ աղջկան առջեւ: Այն ատեն սուսական դիւանագիտութիւնը դիմեց զլորտօրմին, բայց անիկայ ալ թիջքանակութեամբ կուտար. անկէ առաջարկուած ռէֆորմները անբաւական կը սեպուէին նոյնիսկ անոր ընկերակից Աւստրիայէն: Եւ վերջինը՝ ինչպէս յայտնի է՝ ուզեր է միջազգային մասնախումբ մը կարգել. սակայն Ռուսիան չընդունեց ասիկայ իրեւ սուլթանին գերիշխանութիւնը խանգարող. և սուլթանը, որ ամբողջ ամիսներ կուշանար պոտոսխանելու եւրոպական 1895-97 թ. առաջարկութիւններուն, հիմայ երկու օրուան մէջ՝ որոնցմէ մին ալ կիրակի կը պատասխանէ կատարեալ համաձայնութեամբ Ռուսու-աւստրիական առաջարկութեան: Եւ ինչու չէ. անիկայ միւսներէն աւելի կը հասկնայ թէ Ռուսիոյ պահանջումները որքան

եւ ան միակը չէր... վերջին օրերս, բարիզեան ուրիշ օրագիր մը, «Մաթէն», հրատարակած էր կարգ մը լուրեր, որոնց անդիկացած էր իր Բեթեւապուրկի թղթակիրը քաղաք գնդապետէ մը, վերադարձած Մանչուրիայում:

Գնդապետը ուսուսական բանակին ձախորդութիւնները հիմնովին կը ծանրացնէր Պիւրսքրատ կազմակերպութեան ուսին, ամենագլխաւոր պատճառ քերելով աշխարհագրական կատարեալ քարտէզներու չգոյութիւնն բանակներուն մէջ եւ երկրին մեղապարական տգիտութիւնը, որու մասին առաջադրութիւն եղած է ապակաւին 1900ի ատենները, սակայն անտեսուած: Գնդապետը ցոյց կուտայ նոյնպէս, թէ ինչպէս իր բանակը երկար ատեն կոչիկ կարօտութիւն ունենալով՝ շատ զիմուսներ ըրած է ըարձրագոյն աստիճան աւարներուն եւ իր զիմուսները կատարելապէս անհետեւանք մնացած են մինչեւ Լեօնանկի կէտը, երբ հրաման կատանայ մեծերէն՝ փոխուստի պահուն 500 հոգի թողուլ քաղաքը պահեստի միւրքերը կրակի տալու համար եւ այս վերջինները, իրենց գործողութեան ընթացքին, գործ մը, որով որս գինուորները մեծագէտ փաղեցան այս պատերազմին մէջ, կայրին 1,000,000 զոգ նոր կոշիկ... Յաճախ կըսէ գնդապետը, 48 ժամ անօթի մնալէ վերջ՝ մեզ միակ զընդուած ուտեստը եղած է տուփ մը պիւրիթ, այնքան կարծր որ զժժբարխա գինուորները հարկադրուած են փողոցի աղտոտ ջուրերուն մէջ թըրջիկ կակուղցնելու համար...

Քաղաք գնդապետի խօսքերը, ինչպէս ըսինք, հազուադէպ պարագաներ չեն միտաստանի նկատմամբ: Անցնալները փրսնական ուրիշ օրագիր մը—ընկերակարական—հրատարակած էր աւելի կարմաւոցիչ տողեր զինուորական չկողմ մէկու մը կողմանէ, որու միակ նպատակը եղած է հետազօտել երկու բանակները եւ ա

նոնց ներքին կազմակերպական սիւսակներն մտնէն ծանօթանալով կարող ըլլալ ճշգրիտ համեմատութիւն մը ընել:

Եւ ուսուսական բանակին մէջ կը մանէ ու հետաքրքրութեան եւ աւելի քաղաքի մը կազմելու համար պաշտօնաններուն վրայ, կը հարցնէ իրենց թէ ո՞ր կամ ո՞ր կողմը կը գտնուի ճարտ. բանակը, ի՞նչպիսի վիճակի մէջ է, քանի՞ գունդերէ կը բաղկանայ, եւ այլն, ո՞չ միայն հասարակ, այլ եւ նոյնիսկ բարձր դիրքի տէր պաշտօնեաներ անկարող կըզգան ինքզինքնին հարցերուն պատասխանելու, մինչքեւ միւս կողմէ, իրենց ամեն իրիկուն կատարած անհոգ ու անտարբեր օրժիններն ու անբարոյականացուցիչ արարքները ոչ մէկ տեսակէտով պատուաբեր էին: Զինուորները անդին անօթի՝ ասոնք այստեղ չապուստեան եւ միտուսներու մէջ կը տապալուէին, որպէս թէ Մանչուրիա եկած ըլլան առաջադրութեան եւ կերտութեան համար: Միեւնոյն անձը, շոյնպէս քանի մը անգամներ կատարելէ պաշտօնեաններուն ազգային հիմը Պօթէ ցարխ խրանիւն երգել, սակայն աւելորդ է ըսել որ իր խնդիրքը ամեն անգամ ալ ապարդիւն կը մնայ: Երբ պատճառը կը փնտռէ այս մեթոտներն, մանաւանդ տեսնելով որ առաջնութիւնը աւելի «Մարտէյզ»-ին եւ նման երգերու կը տրուի, պաշտօնեանները կը խոստովանին թէ՛ եթէ ցարխ երգը երգուի, անպայման կամ կորի կամ ցաւալի զէպքեր կը ծագին ներկաներու միջեւ քանի անոնց մեծամասնութիւնը հակառակ է այդ անուան եւ չուզէր երգէք լսել զայն...

Այս հետազօտութեան միւս կողմը պատմելը աւելորդ է արդէն: Յոյց տրուած է, որ ճարտական ամենէն վար աստիճանի օֆիցերը ոչ միայն ծանօթ է թշնամիին տեղին, քանակին, վիճակին ու գորութեան, այլ եւ այնպիսի կէտերու, որոնք հիմնովին դուրս են իր գերէն եւ հեռու

պարտականութիւն մը ըլլալէ, Իսկ իրենց եռանդը, ոգեւորութիւնը, խանդը եւ նուիրուելու համար կամաւոր պարտականութիւնը գրեթէ ապացուցիչ է: Անա թէ ինչպիսի անձնուորութիւններու քաջաճոյքին յանձնուած են այսօր հարիւր հազարաւոր կանանչ կեանքեր եւ հաւ թէ ինչպիսի անխիղճ ու լպիրճ զեկապագաներու խրաբակ մըն է, որ իրեն գլխաւոր զբօսանք ընտրած է կեանքեր մորթելն ու խոզխոզելը...

Մ. ՏՈՒԱԿ

Ոֆիս 4 Մայիս 1905

Քանի՞ը խօսքը Պ. Խիսի առթիւ... Խիսուսուքնի վերջին թիւին մէջ Խիսի ստորագրութեամբ Ոֆիսէն գրութիւն մը տեսնուեցաւ, ուր յարգելի թղթակիրը ըսած է որ տեղւոյս երկսեռ երգութիւնը վերջին անգամ սարգած ներկայացման հասոյթը, որ թաղ. խորհուրդ իր հակողութեան տակ առած էր, ցարգ իր նպատակին չէ գործածուած, որով թաղականութիւնը զեղծուով, երգ. խումբն ալ համախոհ է ըսելով դատապարտած է:

Ես իբր պարզ անգամ մը երգեցիկի՝ կուզեմ խնդիրը պարզել եւ խանգարուած մտքերը մասմբ հաճաքարտեցնել:

Ինչպէս է որ աշխատող մը իր աշխատութեան արդիւնքը կուզէ տեսնել, շոյնպէս ալ երգեցիկ խումբը հազարաւոր զոհողութիւններէ վերջ չի պիտի ձգէր որ իր աշխատութեան արդիւնքը բուն նպատակին չի գործածուի, եւ այդ պարզ պատճառաւ շատ

անգամներ գիմուսներ բռած է եւ միշտ թաղականութիւնը իրմէ խնդրած է քիչ մըն ալ սպասել, որովհետեւ դրամական նուազութեան ախր դրամը է կեղծեցական եւ վարժարանական ուրիշ պէտքերու գործածներ է: Ըսել է որ այդ դրամը զեղծուած չէ, այլ բարոյական օրէնքի հակառակ աննպատակաբար գործածուած է, ուրեմն թաղ. խորհուրդի անգամները զեղծարարներ չեն, այլ անկարգապահներ:

Գալով երգեցիկ խումբի, ինքնին հասկանալի է արդէն որ անոնք ալ լուս համախոհներ չեն, այլ զօրաւոր քաղաքացիներ: Ընկերութեան աշխատութիւնները սմանուն ալ ծանօթ են եւ անոր յառաջադրութիւնը վարժարանէն ներս մտնող կը տեսնայ եւ արդէն ինչպէս Ոֆիսի, ուրիշ տեղերու հայութիւնն ալ իր համակրութեան եւ հաւատարմութեան գործնական փաստեր տրուած են. ըսել է որ մենք փոխանակ անտեղի խօսքերու նիւթ տալու պարտական ենք անոնց օգնել, եւ ես աչնուօրէն կը խնդրեմ պարոն Խիսիէն որ ուրիշ առթիւ խնդրի մը վրայ գրելէ առաջ անոր տեղիկանայ եւ տեղեկանալէ վերջ կարելին ընէ ընկերական շրջանակի մը մէջ պայն կարգադրել:

Հարցում մըն ալ ե վերջը... Ինչպէս ըսի տեղւոյս երգեցիկ խումբը իրեն համակիր ըլլալուն եւ իր վրայ հաւատարմութիւն ունենալուն փորձերը տեսած է, ուրեմն ի՞նչ բոլոր ուղտ էք պատ. Խիսի ձեր գրութեան տա-

կիւնը լինել չեմ կարող. եւ զանազան սուտ պատճառներ բերում:

Աւելի պատճառաբանում էի յըրանով որ ուզում եմ զերասանուկի զանազան բեւտր կեանքից աւելի եմ սիրում: Ինձ նուիրում եմ գնդապետներն ու հրամարտու ընտանիք կազմելուց: Բայց իրապէս ամօթն էր ինձ խանգարում, Սիսի անթիւն աճօթի մի մեղքի համար, որում ես մեղաւոր չեմ:

Վիկտորիան այս խօսքերի հետ սրբեց իր ճակտի վրայի քրտէնքի կաթիլը, առաջաց յուզումից եւ բռնի սխտըր մպիտով շարունակեց:

— Դէ՛ քոյր խաղաթղթիւր պէտք է բանալ... Ես դժբաղդութիւնը ունիմ 14 տարեկան հակակից կին լինելու: Ինձ բոլորովին յիմարիս ծախել են մեր տառջին կարգի վաճառական, զանազան շքանշանների տիր, քաղաքապետ Մարիկի Իվանովի Պորուզովին, եւ ծախողներն են ոչ ուրիշները, այլ իմ սիրելի հորաքոյրս, որը այժմ անդամաւոր ընկած է, ու Աստուծոց մահ է խնդրում, եւ Աստուծոց չէ տալիս, թե բեւս ինձ հանած վշտի փոխարէն դեռ տանջելու համար. եւ նոյն Արիւնան, որին ճանաչելու բազմը գուք ունէք:

— Այդ վաճառական Պորուզովից նրանք բնորոշներ են հազար յուրիկ եւ պատռել տել հիմն մի քանի մուր.

հակները, որոնց համար զրաւի դըրւած էին մեր կալւածները:

Պորուզովը միայն մի քանի օր է ժամանակ անցնում ինձ հետ, եւ յանկարծ մեռնում է: Այնպէս որ իմ կորուստի լուրը տարածվելու ժամանակ չէ լինում, եւ նրամասին գիտէինք միայն եւ, Արիւնան մէկ էլ հորաքոյրս: Ահա այդ զաղանիք մեր մէջ էլ մընաց, եւ հորաքոյրս ու Արիւնան այդ մահուան մէջ Աստուծու ժամն էին տեսնում, մի առանձին բաղդաւորութիւն է:

Վիկտորիան զըւանքով ձեռքը շարժեց, ու շարունակեց:

— Տարիքս մանկական էին... կամ կիսամանկական. ես ի հարկէ հասկանում էի որ ինձ այդտեսութիւն են անել տալիս. բայց թէ տնեցիք էին սովորեցնում եւ թէ ամօթի զգացումն էլ թելադրում էր որ ամեն ճիգ պէտք է թափել թագնելու: Բայց բաց ան պատուութիւնն է անպատուութիւն: Ռարեմն այնպէս պահել ոչ ոք չը հասկանայ եւ չը կարողանայ հասկանալ որ դու անմաքուր աղջիկ ես... Եւ այդ իմ մեջ մեծանում էր, արմատանում... այսինքն ամէնքը մաքուր են իսկ ես այսպէս...

Բարեկամութիւններիցս փախուցում էի, ինքս իմ մէջ ամփոփված. մենակ ապրում էի. Միշտ վախենում էի թէ անձ մէկը կը մօտենայ ինձ, կը

նայի աչքերիս մէջը եւ կասէ — վերջը ինչ սրտն, հեռացրէք. միթէ սա իրաւունք ունի՞ մնալ կարգին աղջիկներին մէջ: Սա միայն գիմակն է լաւ կրում, ծածկվելու վարպետ է, իսկ իրապէս ընկած է, Պորուզովի սիրու հին է եղած:

Ու կարմրելով, կատաղութեան մուգ կարմիր յոյնով վիկտորիան շարուեցաւ նետեց...

— Ստոր հորաքոյրս մի անգամ մի ինչ որ պատճառով վերաւորվելով ինձ նից այդ կոչումը երեսիս զարկեց... Տաս տարի անցել է եւ ոչ մտանալ եւ ոչ էլ ներել եմ կարողանում: Կարծեմ մեռնելու ժամանակ միայն չը պիտի կարողանամ համբերել եւ ականջում պէտք է փսփսամ, — ինչեցք մօրաքոյր թէ ինչպէս եզօրդ աղջկան Պորուզովին ծախեցիր վերջն էլ այդ գործով հայհոյեցիր: Ու ամբողջ կեանքիդ մէջ, հորաքոյր, այդ ծախված աղջկայ վզին նստած նրա ուղորմութեամբ ձեր զըւելի կեանքը անցրիք:


Ներեցէք որ յուզվում եմ, տհաճորէն եւ խեղճուկ կերպով ժպտալով շարունակեց. — Շատ վատ է, ցեխոտ... էհ, վերջապէս մեծացայ, երկար զգեստներ հագայ, սկսեցի մի քիչ անկախօրէն մտածել ու մի քիչ ներողամիտ գտնվել դէպի ինձ:

Ապրել եմ ուզում, ի հարկէ կը

ներեմ, Հասկացայ որ ես բոլորովին մեղք չեմ ունեցել եւ չը կայ. այլ ինձ հետ շարուեցաւ էին վարվել մարդիկ, աղտոտ մարդիկ, եւ մեղքը նրանցն է: Իսկ ինձ մնում է միայն կեանքիս մնացողը ապրել մաքուր կերպով, անցեալի մասին ինքզինքս չարչարելը անմտութիւն. նոյն իսկ ինձ հանգէպ անարդարութիւն է: Կեանքս զեռ երկար պէտքի լինի: Պարզվեց որ լաւ ձայն ունեմ. գնացի կօնսերվատորիա. ընդունեցին ձրաթղթակ. ես աշխատում էի ե. զան պէս, ինձ քովասանելու չափ չէին գտնում. մինչեւ անգամ ուսուցչուհին ինձ յանդիմանում էր որ ես շատ խիստ, մարդկանցից փախչող եմ: Միշտ կամ տանն էի, կամ դպրոցում. ապագայ դիւսասանուհուն այդպէս ապրել չէր կարելի բա ուսուցչուհուն, մարմարացած վեստալիայի նման:

Հրաշալի վեստալիա, Պայուրկովի նշարանից դուրս եկած վեստալիա, Այդ խօսքը պատահում էր որ ինձ ամբողջովին տակնուվրա էր տնում եւ ես վերադառնալով տուն. գլուխս բարձի մէջն էի թաղում, ու ամբողջ օրը լաց լինում:

Շարունակելի



կի գիտողութեամբ «թագ» խորհուրդը որ և է զեզոմով մը առաջը առնելու համար ներկայացման հաշիւները իր հսկողութեան տակ առած էր» ըսելով, նախ որ այդ հաշիւական մասը ուղղակի ընկերութիւնը թաղականութեան յանձնած է, երկրորդը ըսել է որ թագականութիւնը չըլլարնէ այդ ներկայացման արդիւնքին մէջ զեզոմով լսող պիտի գար. շիտակը շատ կը ցարձա որ լաւ չի մտածուած և չի հասկցուած գրութիւններ մեր կարգ մը խմբագիրներու ալ աչքէն վրիպելով թերթեր կը մտորոտին և մտքեր կը խանգարուին:

Աւրեմ, Տիար Խիալ, կը յուսամ որ դուք ալ կը հաճիք խնդրին աւելի տեղեկանալ և ձեր սխալած ըլլալը հաստատութեամբ մը պարտուած մտքերը կը հանգարտեցնէք:

Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունիսի սկիզբին ազգային ժողովը արտակարգ նիստերու պիտի հրահարուի:

— Համալսարանի վարչութեան ժողովը պիտի որոշէ ուսանողական խառնակութեանց թելադրող ուսանողները արտաքսել, հապա դասախօսութիւնները սկսիլ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

— Պոլսոյ ֆրանսական դեսպանը մայիսի վերջը պիտի մեկնի և ըստ «Բաթրի» թերթի թուրքերին:

Թուրքիա կը պատրաստուի զիջողութիւններ ընել Ռումանիոյ, սակայն առիթ պատասխանը այնքան զոհացուցիչ չէ:

Գերման կառավարութիւնը թէ Պուրթէշի եւ թէ Պոլսոյ մէջ կաշխատի այդ միջոցէ պին խաղաղ վերջ մը տալ, Բուրք մեծ պետութիւնները Ռումանիոյ պաշտպան կը հանդիսանան:

ՏՐԱՆՍԱ

Ֆրանսական մամուլը կը յայտնէ որ արտաքին գործոց նախարար Տէլքասէ պիտի հրատարի իր պաշտօնէն Սպանիոյ թագաւորին այցելութենէն վերջը, եւ իբր թէ անոր պիտի յաջորդէ Պոլսոյ դեսպան Գոնսթանը:

— Սուլթանական իրատէսով մը կը հաստատուի ֆրանսական ընկերութեան Սիրիոյ երկաթուղիին շինութեան մասին տրուած նախարարական որոշումը:

Կ Ր Է Տ Է

Կրէտէն հովանաւորող չորս պետութիւններու կողմ յանձնուած է իշխան Եօրկիոսի, ուղղուած կրէտէի ժողովրդին Պետութիւնները կը յայտարարեն որ այդ կողմ կուզեն ոչնչացնել ներկայ կացութիւնը փոխելու ամեն մէկ մտածում: Միեւնոյն ատեն կը յայտարարեն որ եթէ ապստամբները զինազուլ ընեն, պետութիւնները ելեւմտական եւ վարչական բարենորոգումներ պիտի ընեն, Իսկ հակառակ պարագային թէ ցամաքէն և թէ ծովէն միջոցներ ձեռք պիտի առնեն խաղաղութիւնը և կարգը վերահաստատելու համար:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Թօքթիոյէն մայիս 3ին կը հեռագրեն որ գերմանական զօրքը գրաւեր է չինական Հայնու քաղաքը: Սակայն Պերլինէն Բարիզ պարնուած պաշտօնական հեռագիր մը կը հերքէ այդ լուրը:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Ճարին մէկ հրովարտակովը Լեհական նահանգներու մէջ լեհացիներու քանի մը խուռած իրաւունքները վերադարձուած են. ազնուական ընտրութիւնները վերահաստատուած եւ նախակրթարաններու մէջ լեհական լեզուին դասաւանդումը արտօնուած է:

— Մայիս 4ին տեղի ունեցնել է Սերգիյ զուքսին սպաննող Կալաբիին մահուան պատժի գործարքումը:

— Երկրագործութեան նտխարար Երմօլով հրատարած է իր պաշտօնէն:

— Ռեֆայի նահանգապետ մէնէրալ Սօրօլէվսկին թատրոնի մէջ առ ճանակի քանի մը հարուածներով վիրաւորուած է: Ըս. պանութեան փորձ ընողը յաջողեր է փախչիլ:

— Մայիս 4ին կը հեռագրեն որ Թվէր քաղաքին շրջակաները խումբ մը ցուցարարներու միանալով քանի մը տասնեակ գործաւորներ կարմիր դրոշակ բարձրացնելով անցան դէպի մանածիպործարանը: Գործարանի գործաւորները ցուցարարներուն արգիլեցին ներս մտնալ, այդ պատճառով ընդհարում տեղի ունեցաւ, որի հետեւանքը եղաւ մէկ գործաւորի սպանումը և մէկ քանիսի վիրաւորումը: Յուցարարներու կողմէն նանրապէս վիրաւորուած է օգնական փաստարան մը:

— Գիւլի երկաթուղիին արհեստանոցը կը մտնան 50ի շափ երրորդասարգներ և սուլիչը սեղմելով. ամեն տեղ գործը կը

զադրեցնեն:

Նոյն երեկոյին Ա. Վլատիմիր արձանին քովը յանկարծ խումբ մը գործաւորներ հաւաքուեցան եւ ատրճանակներ պայթեցուցին. ոստիկանութիւնը ցրուեց ամբողջը:

— Ռիգա ոստիկաններ տանող կառքի մը մէջ ռումբ նետուեցաւ. կառքի մէջ գտնուողները ծանրապէս վիրաւորուեցան:

— Օտեսայի մէջ մայիս 4ին գրաշարները գործաթող յայտարարեցին:

— Օտեսայի մէջ ռումբի գաղտնի գործարան գտեր են:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Ռուսական երկու նաւարածիւններուն միացումը կը հաստատուու. հեռագր. գործակալութիւնը:

— Իսթերսպուրէն կը հաղորդեն որ Մանչուրիոյ մէջ գանձուած օտար զինուորական ներկայացուցիչները և թղթակիցները Խարպինէն անցնելով Մանչուրիայէն դէպի ծովափնայ քաղաքները կը մեկնին ծովային պատերազմը դիտելու համար:

Ճարնիոյ արտաքին գործոց նախարարը պաշտօնապէս կը յայտարարէ որ ռուս նաւատորմից կրկին Դամբան ծովախորշը վերագործել է:

— «Տէյլ Մէյլ» թերթին Լոնկ ֆօնկէն կը հաղորդեն որ կացութիւնը հետզհետէ անհանգիստ կըլլայ. ծովային ճակատամարտը ամէն օր կը սպասուի:

Ճարնի կառավարութիւնը հաստատապէս ստուգած է որ ֆրանսական հողի վրայ ռուսները անթել հեռագրի կայան հիմներ են: Վերջին երեսուն օրուան մէջ ռուս նաւատորմիցը ստացել է 120000 թօնօ քարածուխ, որուն ուսկէ ըլլալը գաղտնիք է:

— «Պալքանիք» հեռագր. գործակալութիւնը կը հաղորդէ որ Թօքթիոյէ Թօկոյի հրամայում է անմիջապէս յարձակիլ ռուսական նաւատորմիցին վրայ:

— Ճարնացիները Բօրէայի հարաւային կողմը ձերբակալած են Անգլիական և Պեակտօրեան կղզիներուն քով ֆրանսական շոգենաւ մը:

— Ամբողջ Թօրմօզա կղզին պատերազմական վիճակի մէջ դրուուած է:

— Մայիս 5ին Լօնտօնեան թերթերը կը հաղորդեն որ Խայնուին գրաւումը Գերմանացիներու կողմէն ճիշդ է: 300 գերմանացիներ հոն մտնելով գերմանական դրոշակ տնկեր են:

— Մայիս 5ին Թօքթիոյի գերմանական դեսպանը պաշտօնապէս կը հերքէ Խայնուի գրաւումը:

Ա Ջ Դ

մը յայտարարելով որ այդ տեսակ քայլ մը բոլորովին հակառակ է գերմանիոյ Մայրաքոյն Արեւելքի մէջ հետեւած քաղաքականութեան:

Աղքատ. Ընկեր. Գործ. Ժողով կուգայ հրապարակաւ յայտարարել թէ Ընկերութեանս ի նպաստ սկսած է գանձանակ մը շրջաբերել հաւաքիչ պ. Ղ. Գիրիշեանի ձեռամբ. եւ կը խնդրէ որ ամեն անհատ անխորհէն մասնակցի սոյն բարենպաստ կործին որուն համար կանխաւ մեր շնորհակալիքը:

Այս առթիւ նաեւ կուգայ խնդրել այն արդոյ ազգայիններէն, որոնք ինքնաբերաբար փափաքած են ընկերութեանս ամսական վճարում մը ընել, հաճին ըստ առաջնոյն վճարել հաւաքիչ, ստանալով իրենց ընկալագրերը, որպէս զի Գործ. Ժողով կարենայ միտ նպաստել իրեն զիմօղ աղքատները:

Ի դիմաց Աղքատ. Ընկեր. Ատենադպիր Ատենապետ Թ. Ազապլար Մ. Գարագաշեան

ՓՈՒԹԱՅԷՔ ՕԳՏՈՒԻԼ ՈՒ ՕԳՆԵԼ

Հայկազարտան գիտական ու գրական հանդէսի երկու հատորները (որոնցմէ միայն 50 օրինակներ մնացած են), փոխանակ իրենց «Իրական արժէքովը 22 ֆրանքի» ծախուելու, «Կը ծախուին 15 ֆրանքի» միայն:

Աւելորդ է խօսիլ անոր բովանդակութեան շահեկանութեան մասին, որուն վրայ արդէն հայ մամուլը լաւագոյն ներկայացուցիչները ժամանակին շոյալած են գնահատանքի արժանի փայտայտիչները:

Բացի այն որ Համալսարանի երկու կտորները իրենց անթաւամ ու հրահանգիչ պարունակութեամբը պիտի ըլլան միշտ ինքնազարգացումով զբաղողներու համայնագիտարանը, այլև լաւագոյն անկիւնը պիտի դրանք միշտ փնտրուած և հետաքրքիր գիրքերու մէջ, որոնք պիտի զարդարեն անհատական թէ հասարակական գրադարանները, մնալով ցարդ ամենէն փայլուն նմուշը «Հայ լրագրութեան»:

Համալսարանի գինը սկարացնելով մեր նպատակն է առաջին շուտով տարածել անոր մնացած հատորները հայ ժողովրդին մէջ, որպէս զի իրենց հրահանգիչ նպատակին ծառային, երկրորդ գեղեցիկ առիթ մը ընծայել, կայն զնել փութացող ուսումնասիրներուն առանց ու է զոհողութեան, կարենալ օգնելու Մուշի կարօտեալներուն, որովհետեւ զուտ հասոյթին մէկ երրորդ մասը պիտի յատկացուի այդ վերջիններուն: Գնողներու առնունքը կամ ծածկանունները, ինչպէս որ իրենք փափաքին, հրատարակուելու են ղՀայրենիք» ինչոյն ըրպատակով բացած հանգանակութեան անկիւն մէջ:

Ամեն տեղի համար երկու հատորները թղթակազմ 15 ֆրանք. կարելի է զիմել Եարթու. խմբագրութեան կամ ուղղակի:

Պաշտասարտան 19 ռիւ վօսիլի Բարիզ

Отговорникъ Мурадъ-Ераносянъ Печатница «Враинность» Варна